

ՄԱՍԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակիի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւարանիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՆԻ ԱՐԾՈՒՆԵՐ

Աննա Միսնասան, Սաթիկ, Լեւոն եւ Արամ Գեորգեան Աղամանները սրանով
յայտնում են իրանց խորին չորհրդակալութիւնը այն անձանց, որոնք բարեհաճել էին
իրանց ներկայութեամբ յարգել առաջինի անմոռանալի ամուսնու եւ միւսների բազմա-
րախտ հօր՝

ԳԵՈՐԳ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ ԱՂԱՄԵԱՆՅԻ

յուզարկաւորութեան հանգէսը, որ տեղի ունեցաւ ապրիլի 30-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անմեղ դատաւարութիւնները.—Ներքին Տե-
ստիքի Մարմին. Մարմին. Որն է իսկական պատ-
ճառը. Ներքին լուս. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
թիւն. Արտաքին լուս. —ՀԵՌԱՐԻՆԵՐ. —
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Պարսից Շահի ճանապարհորդութեան առիթով.
Պարսկական մի քաղաքի նկարագիր.

ԱՆՄԵՂ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Անմեղ դատաւարութիւնները մշտապէս
առիթ են եղել հասարակական պրոպեդի-
դատաւարական թերութիւնների դէմ: Ի-
րաւագէտների շրջանում շատ անգամ
խնդիր է յարուցվել դատաւարութեան
անմեղ գոհերի վիճակի մասին եւ մինչեւ
այժմ միայն մի ձեւ է գտնվել փոքր ի
շատէ մեղմաներու եղած գրկանքները եւ
գոհացներու անմեղ գոհին, այն է՝ վճա-
րել նրան մի յայտնի դուստր, իբրեւ վար-
ճատութիւն այն գրկանքի համար, որին
նա ենթարկվել է թիրիմացութեան եւ
դատաւարական սխալների պատճառով:
Այդ սկզբունքը այժմ ծրագրված է մեղ-
նելու Ռուսաստանի բրեժնեւի դատաւար-
ութեան մէջ եւ նրա իրաւորութեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐՏԻՑ ԾԱՀԻ ԶԱՆԱՊԱՐԱՆՈՒԹԵԱՆ Ա-
ՌԻԹՈՎ

Պարսկաստանի գլխաւորապէս Ատրպատ-
կանի ազգայնականութեան հանգամանքները պար-
զելու համար, ստիպված ենք մի թուղթիկ հա-
յեացք գցել դատաւարական անկիւններում գոյու-
թիւն ունեցող այն հրէշաւոր ընթերցի վրա, ո-
րով պարսկացիները են տեղական կառավարիչ-
ները, շատ անգամ առանց բարձրագոյն թուղ-
տութեան եւ հրահանգի:

Շատ հեռու չը գնալու համար՝ կը վերցնենք
դատաւարական եւ գիւղական կեանքին վե-
րաբերեալ մի քանի իրողութիւններ:

Իւրաքանչիւր գիւղ մի-մի վասալ իշխանու-
թիւն է իր գիւղապետ խանով, բառիս ընդար-
ձակ նշանակութեամբ: Վերջինիս ձեռքումն են
գիւղական բոլոր գործերը: Նա եւ դատաւոր
է, եւ օրենսդիր, եւ կառավարիչ: Կառավարու-
թիւնը երբեմն տանակալ տարիներով կապալով
է ապրիս գիւղը որ եւ է հարուստ խանի՝ եւ
ինքը տարեկան մի որոշ գումար ստանալով,
այլ եւս ոչ մի զէպըութ չէ խանովում գիւղական
գործերին, կամ ինչպէս ասում են, նա միայն
իր փողի տէրն է: Այնուհետեւ ինչպէս է կա-
ռավարվում գիւղը, կամ ինչ բաներ են անց-
նում գիւղական ժողովրդի գլխով՝ այդ միայն
գիւղատէրի իրաւունքն է եւ հայելը. ոչ սար-
փարաստ (գայմագամ), եւ ոչ էլ որ եւ է բարձ-
րագոյն դատաւոր այդ հայելների մէջ մտնելու
իրաւունք չունի: Եթէ բարձրագոյն հրամանը
ստիպում է, ենթադրենք, քննել քաղաքացիական
կամ քրեական որ եւ է զէպը՝ այն ժամանակ,
նշանակված դատաւորն ամենից առաջ իր ձեռ-
պիտի կանչէ գիւղատիրոջը, խորհրդակցէ, ի-
րաւունք ստանալ նրանից, եւ այնուհետեւ
գիւղը մտնի. վերջինի ուղղածն էլ հէնց այդ է:

Համար նշանակված է տարեկան 10,000
րուբլի:

Երեք տարի սրանից առաջ գերմանա-
կան կառավարութիւնը ներկայացրել էր
բէյլատագին մի ծրագիր, որով սահմա-
նում էր անմեղ դատաւարութիւններին
վարձատրելու եղանակը: Գերմանական կա-
ռավարութեան մշակած այդ ծրագիրը ոչ
միայն ժամանակի պահանջ էր, ոչ միայն
հասարակական կարծիքի պահանջ էր,
այլ եւ հետեւանք էր նոյն բէյլատագի
յայտնած բողոքների: Այդ ծրագիրը սա-
կայն ընդունվեց միայն իբրեւ առաջին
քայլ զէպի աւելի լայն բէյլատագին նոյն
ուղղութեամբ:

Արդարեւ անմեղ դատաւարութիւնն
վարձատրելու գերմանական ծրագիրը մի-
այն աչքի առաջ ունէր այն մարդկանց,
որոնց դատը վերաբերվել է եւ նրանք այդ
երկրորդ կառավարութեան ժամանակ ճա-
նաչվել են արդար եւ անմեղ: Իսկ մի-
նոյնպէս գրկանքներ չեն կրում այն մար-
դիկ, որոնք երկար ժամանակ բանաւ նստե-
լուց յետոյ, ճանաչվում են կատարելապէս
արդար, որոնք այդպիսով հանդիսանում
են նոյնպէս բողոքողին անմեղ գոհեր: Այս
ձեռով բողոքներ յայտնվեցին գերմանական
բէյլատագում եւ անկախած աւելի լայն

Իւրաքանչիւր հրամանը պատւած լինելու հա-
մար՝ նա մի տեսակ դաշն է կապում սարփա-
րաստի հետ եւ երկուսը միացած, կառավա-
րում են ժողովուրդն այնպէս, ինչպէս իրանք
ցանկանում են, իսկ իրանց ցանկացածը՝ այդ
հօ փողն է:

Ենթադրենք, որ երկու մեղադրեալներ դատի
են կանչված: Դատարանում, դատաստանական
դահլիճի վերի անկիւնում, մահուղի դռակի
վրա ծաղկապատիկ նստած են երկու հաստ,
զգածիկ զէպեր եւ դատում են մեղադրեալնե-
րին, նրանցից մէկը քաղաքի կառավարիչը—
սարփարաստն է՝ իսկ միւսը գիւղատէրը: Դա-
տարանից առաջ սկսվում է մի տեսակ զնն-
դական հայեացքով զէպի մեղադրեալները: Աչ-
քի տակով մի լաւ քննում, զննում են, տեսնե-
լու, թէ երկու բողոքողներից որն է լաւ հայե-
ված, հարուստ, որից կարելի լինի համեղ պա-
տաններ կորզել: Սարփարաստը, իբրեւ գիւղի
անմահութիւն մի անգամից չէ կարող, ի հարկէ,
որոշել այս, եւ ահա այս զէպըութ նրան օգ-
նութեան է հանում գիւղատէրը: Նա լաւ ծա-
նօթ է գիւղացիների հետ. նա իր հինգ մատի
պէս գիտէ եւ ճանաչում է գիւղացիներից հա-
րուստին ու աղքատին:

Մէկ էլ տեսաք նա մի բան փոխաց սար-
փարաստի ալկանջին, եւ ահա դատաւիճիւր
պատրաստ է:—Մուտքը մեղաւոր է. իբրեւ
ջարմա (տուգանք) պէտք է վճարէ 40 թուման՝
եւ գործը վերջացած է: Դէհ, դնացէք, էլ ինչ
էք սպասում. վաղը փողի հետ մի գլուխ շա-
քար էլ կը բերես, չայ-փուլի տեղ մի երկու
թուման էլ կը բաժանես ծառաներին՝ եւ ա-
զատ ես: Այնուհետեւ Մուտքը որքան կուգէ
թող մէջ բերէ իր անմեղութեան ապացոյցները:
Թող ճաքվի, տրաքվի, վիսներ կանչի՝ եւ ամ-
բողջ աշխարհին հռչակէ, որ ինքն անմեղ է,
որ իրանից փողը գուր տեղն են անում—այդ
նշանակութեան չունի. եթէ չէ կամենում են-
թարկվել ապաւնացող աւելի խիստ պատիժնե-
րի, եւ որ գլխաւորն է, եթէ չէ ուղղում քրեա-
նա՝ նստել՝ անպայման պիտի վճարէ նշանակ-

ծրագիր ընդունելը միայն ժամանակի
հարց է:

Եթէ արդարադատութիւնը աշխատում
է կամաց-կամաց թեթեւացնել պատժի եւ
դանակները, եթէ յանցանքի մէջ աշխա-
տում են շատ անգամ որոնել ոչ թէ չար
գիտաւորութիւն, այլ հոգեկան տրամա-
դրութիւն եւ հիւանդութիւններ, եթէ
ամբողջ դատաստանական կազմակերպու-
թիւնը ձգտում է աւելի մեղմ եւ ան-
վատնող վճիռներ կայացնելու, որքան ա-
ւելի, ուրեմն, նա պարտաւոր է արդար
լինել զէպի այն մարդը, որը բողոքողին
անմեղ է, որը միայն թիւերի մացու-
թեամբ կամ ինտրիգների շնորհիւ են-
թարկվել է գրկանքների: Դատաւարական
գործի առաջագիծութիւնը պահանջում է,
որ անմեղ գոհերի թիւը հասցրած լինի
minimum-ի, իսկ եղած գոհերը վարձա-
տրվեն բաւարար կերպով:

Այդ հարցը յարուցված էր եւ ընկնում
էր նոյնպէս Ռուսաստանի իրաւագիտական
եւ դատաստանական շրջաններում: Այժմ
նա ստանում է դրական լուծում եւ նրա
էութիւնը հետեւեալն է: Այն զէպերում,
երբ դատաւարութիւնն անմեղութիւնը ա-
պացուցված է եւ նախկին դատաւիճիւրը
ենթարկվել է փոփոխութեան, դատարա-
նին թող է տրվում խորհրդատուի լինել
Վայսի առաջ, արգարադատութեան մի-
նիստրի միջոցով, վարձատրելու անմեղ
դատաւարութիւն. իսկ արգարադատու-
թեան միմիտրը իր զեկուցումը ներկա-
յացնելուց առաջ պէտք է բանակցութեան
մէջ մտնի այդ մասին Ֆինանսների մի-
նիստրի հետ:

Անմեղ դատաւարութիւններին ներթա-
պէս վարձատրելը չէ կարող կատարելա-
պէս գոհացնել գրկանքի ենթարկված
մարդկանց, բայց նա հասարակական լրջա-

ված-դուստրը, իսկ եթէ զլիք տէր մարդ է,
միայն անգամ փառք պիտի ապաւնուի, որ
այդքան է ժան էլ պրծաւ, մտքում ունի զնե-
րով ի հարկէ, որ այդպիսին ինչ էլ լինի՝
դատարանի չէմքը ոտ չը կոխի, եւ կամ առ-
հասարակ կաշխատի խոյս տալ այնպիսի շար-
ժանութիւնից, որոնք գործը դատարանին կը
հասցնեն:

Այս է ահա Պարսկաստանի գէթ գաւառնե-
րում տիրապետող ընթերցի Դատը վաստակելու
համար յաղթողը նա է հանդիսանում, ով որ
փող շատ ունի, եւ կաշառքի աւելի բարձր գին
կարողանում է վճարել: Ժողովուրդը, մանա-
ւաւոր գիւղական ճնշված դատաւարը, այս բո-
լորը տեսնելով, չէ էլ երեւակայում գիմել աւե-
լի բարձրագոյն դատարանները, համոզված լի-
նելով, որ այնտեղ եւս գործ տանելու համար
աւելի շատ փող է հարկւում. իսկ ինքը, հա-
մեծաւորով իրան հարուստ գիւղատէր խաների
հետ, գուշակում է, որ իր բողոքը ձայն բար-
բառոյ յանապատի՜ պիտի մնայ Մանուսանդ
վերջինները յոյս չունելով այն բանի վրա, որ
կաշառք տուած փողն ապագայում էլ ի ժողո-
վրդի կաշառք պիտի պոկեն՝ անխնայ չտալով
են կաշառք դատաստանական բարձրագոյն
պաշտօնեաներին: Եւ գործը տանելուց յետոյ,
վաճառի գիւղին կամ ժողովրդին, որ համար-
ձակվել եւ համարձակվում է բողոք բարձրաց-
նել գիւղատիրոջ դէմ: Վերջիններս թիւն այս
զէպըութ կրկնապատիկ է լինում: Տարիների
ընթացքում կրկնված այս դաշն փորձերն այն
ատիճան ընթացիկ հանգրեւ են Պարսկաս-
տանի ժողովրդի մէջ բողոքելու գագաթնաւանդը,
որ գիւղատէրի ու սարփարաստի նշանակած
ամեն մի նոր հարկ, կամ որ եւ է անօրէն,
ապօրինի պահանջը նա լուս եւ մուշկ տա-
նում է:

Այսօր, երբ նորին վեհափառութիւն Շահի
ճանապարհորդութիւնն է կատարվում, յարմար
առիթ է ժողովրդին իր իւրացած ձայնը լսել
տալու համար: Եւ նա այդ անում է: Շահը
ճանապարհորդում է Երկրի այն մասերից, որ-

մասերի արտայայտութեան զործնական
ձեւերից մէկն է, որ շօշափելի կերպով
ուղղված է զէպի անմեղ գոհեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Հայ հոգեւորականը... Դեռ Փաւստոս Բիւ-
զանդացին է մեզանից 14—15 դար առաջ նը-
կարագրել թէ ինչ տիպեր է տալիս այդ դա-
սակարգը—բացասական, չահածոյ, անպատիւ
տիպեր: Հայ հոգեւորականը իր արատները
անմահացրել է Մովսէս Խորենացու ողբի մէջ:
Անցել են այդ ժամանակներից դարեր, փոխ-
վել են աշխարհի վրա շատ կարգեր, բայց այ-
սօր էլ մենք հարկադրված ենք աւտօրեալ ան-
թիւ փաստերով համոզվել, որ հոգեւորականի
արատը անմահ է, որ նրան չեն կարողանում
ուղղել ոչ ժամանակը, ոչ հանգամանքները,
ոչ նոյն իսկ ուսումը: Կայ, երեւի, դասակար-
գային մի ներկայի միջնորդը, որի մէջ չէ կա-
րելի լինել առանց արատների, կայ, երեւի, մի
տիպեր անհրաժեշտութիւն, որ հոգեւորականը
իր քարոզած սկզբունքների հակադրութիւնը
ներկայացնէ կեանքի մէջ: Ինչու է այսպէս
Պատճառների քննութեան մէջ առ այժմ չը
մտնենք, այդ մասին շատ է խօսվել, շատ դա-
տողութիւններ են եղել: Բերենք մի փաստ
«Արեւելք» լրագրից: Խուլ, դժբախտ թիւրքաց
Հայաստանի մի անկիւնից մի պատահական
թղթակից տեղական առաջնորդին այսպէս է
նկարագրում.

«Առանց ճիւղաւոր մինչեւ ծունկը համոզ
բաց գոյն մուշակով եկելուց կը մտնէ
կիլէ. ճիւղաւորն առկէ բաց գոյն պարե-
գոտով այցելութեանց կերթալ եւ եթէ հոյզ
քղանցքը վերցնէ, շարունակ դաւադանին
ծայրով քղանցքը կը պահպանէ որ տակինը
չերեւայ, աղքատի մը 10 փարա տուած չունի
ցայսօր ոչ իր, ոչ ազգային դրամին, բայց իր

տեղից անցնելու է նա՝ այժմանից արդէն
լավում են խլրտուներ ու բողոքներ: Տարիներ
ընթացքում ծանր հարկերի տակ ճնշվող,
աղքատութեան, պարտքի մատնված ժողովուր-
դը աշխատում է իր խոցոտված սիրտը բաց հա-
նել նորին վեհափառութեան առաջ՝ պարզելով
իր տնտեսական անտանելի դրութիւնը եւ բո-
ղոքելով անսահման գիւղատէրերի ու սարփա-
րաստների պատճառած աւերածութիւնը եւ իրանց
հասցրած հազար ու մի գրկանքների մասին:

«Մինչեւ այժմ մենք լուս էինք՝ որովհետեւ
նախ՝ մեղ լուրջ էր կար, երկրորդ՝ որ մեր
ձայնը տեղ չէր հասնի. իսկ այժմ, այժմ մենք
անձամբ կը ներկայացնենք մեր բողոքը, լաց
կը լինենք, եւ իբրեւ մեր տիրոջ, որ իր ժողովու-
րդի բարօրութիւնը միայն ի նկատի ունի՝ մի
չնորս, մի այցելութիւն կը խնդրենք, իսկ հա-
կառակ զէպըութ, դանակը ոսկորին է հասնել,
չենք կարող համբերել, մեղ մի ճառքալ տուր
կասնեք»:

Մի քանի շաբաթ է, այսպէս են խօսում ի-
րար մէջ տուն ու տեղ թողած պարսկաստան-
ցի պանդուխտները, եւ այս միջոցին դիմելու
համար է ահա, որ սկսած այն օրից, երբ Շա-
հը գուրս է եկել Թէհրանից, խլրտուներ են
լավում Ատրպատականի դանապան խուլ ան-
կիւններից՝ եւ ժողովուրդը պատրաստում է
բողոքագրիներ ներկայացնելու Շահին, հէնց
որ նա ոտ կը դնի դաւառական քաղաքներն ու
գիւղերը: Բայց որովհետեւ ժողովուրդը ստատիկ
վանկնում է սարփարաստների ու գիւղատէրե-
րի ապագայ լրէժանագրութիւնից՝ այդ պատ-
ճառով աւելի նպատակայարմար են համարել
բողոքները ներկայացնել Ռուսաստանում, հէնց
որ Շահը ոտը կը դնի ուստաց հողի վրա: Իսկ
այն տեղերը, որտեղ ճանապարհներից դուրս է
նամակներով պէտք է ուղարկվեն բողոքները,
որոնցից մի մի օրինակ ուղղված պիտի լինի
Թաւրիզ՝ Նիզամ-Սալթանէի հասցէին:

Թէ ինչ հետեւանք կարելի է սպասել՝ այդ
յայտնի չէ. բայց ժողովրդի հակացող մասը
համոզված է, որ վեհափառ Շահը սիրով կը

տաճանակ կատուները առատաբար կը կերակուրէ... որովհետեւ մուկէ շատ կը վախնայ, ընդհանուր կանոն, ազգային մը աղերսը բացարձակապէս կը մերժուի. եթէ աղերսարկուն միայն քանի մը հարկւոր ոսկի ունի, դժուարաւ լսելի կըլլայ, իսկ եթէ քանի մը 1000 ունի, իսկոյն կը կատարուի ինչ որ ալ ըլլայ...

Այս առիթով լրագիրը համեմատում է Քրիստոսի պաշտօնանկներին Քրիստոսի արածներին եւ ասածներին հետ. Ու—պէտք կայ աւելու—տարբերութիւնը դուրս է գալիս անուի, ապիցեցուցիչ:

Մեր հանրային կեանքի սովորական երեւոյթներն են լսել, վարդապետ մը կամ եպիսկոպոս մը որ այսինչ կամ այնինչ գաւառին ուր պաշտօն մը յանձնուած է իրեն օգին կամ ջուրին կամ մարդոց տանելի կամ անտանելի հանգամանքներուն վրայ կը խօսի, իբր արդարացեցիչ պարագայ իր այդ պաշտօնը ընդունելուն կամ մերժելուն, իբր թէ Մեծ Վարդապետին փառաստանք ծաղկեցանք պէտք էր վերածուի իր յաջորդներուն ճակատին վրայ: Կենքի փորձառութեան ասուրեայ ապացոյցներով կը տեսնենք քահանաներ կամ ծայրագոյններ որ կրօնած գրկանք մը կամ թշնամանք մը իբր արդարացեցիչ պատճառ մէջ կը ընդուն իրանց քէն ու յիշին ու հայածանքին, այս կամ այն անձին կամ հաստատութեան դէմ, իբր թէ ապականուած ատեն միւս երեսը կարկառող իրենց վարպետին օրինակը միմեակ թուղթի վրայ գոյուծելու ունեցած ըլլար: Բանի հատ կրնանք գտնել Տէր Խաչատուրներ որոնք տոպրակը կուրծքներին, դուռնէ դուռ, ողորմութիւն կը մուրան, որքն ու աղքատը մխիթարելու համար. քանի քահանայ կը գտնենք որ իրենց հանգիստը կը խանգարեն, ընտանեկան խանգարուած անդորրութիւն մը վերականգնելու կամ անժառանգ հարուստ մը ի նպաստ ազգային կրթական կամ բարեգործական հաստատութեան մը կտակել թելադրելու համար: Վերջապէս քանի առաջնորդ կը գտնենք որ իրենց հանգիստը մոռցած, իրենց հոգեւոր հօտին բարեօրէն եւ հանգստութեան համար կաշխատին առանց ու եւ անկալութեան եւ անձնական նկատումի:

Ճիշդ է, հազար անգամ ճիշդ: Մկնրից վախեցող եւ դուր համար տաճանակ կատուներ կերակուրող առաջնորդներ շատ կան ամեն տեղ, եթէ միմեակ փոխարէն ընդունենք մեր սրբազաններին անհանգստացող հասարակական արտունջները, իսկ կերակուրող կատուներ համարենք այն անկալեցններին, որոնք իրանց լիզած փոխարէն պարտաւոր են ոչ միայն փառաբանել գերապատիւներին, այլ եւ իշխանութիւն ունեցողներին օտո միջնորդին նրանց զիրքը ամբաստանելու համար: Կրկնում ենք, շատ ճիշդ է լրագիրը նկարում մեր սեւագլուխ:

Եւ արտունջները եւ հէնց որ Եւրոպայից կը վերադառնայ, ուշադրութեան կանոնէ այդ խնդիրները: Ա. Տէր-Ներսէսեան Բագու:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՄԻ ՔԱՂԱՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Սալմաստ, ապրիլի 10-ին
Թող աւելորդ չը համարվի Պարսկաստանի մի գաւառական քաղաքի թեթեւ նկարագիրը տալ:

Սալմաստի գաւառական քաղաքն է Դիլիմանը. Չուտ թուրքաբանակ քաղաքն է դա, մօտ 4000 բնակիչ ունի եւ գտնվում է գաւառի համարեա կենտրոնում՝ աւելի քան 70 մեծ ու փոքր գիւղերով շրջապատված: Քաղաքը պատած է կաւէ թանձր շրջապարիսպով, որը հիմնվելու օրից, երթարկված լինելով բնութեան ազդեցութեամբ, գտնվում է խորխուր ողորմութեան մէջ, ինչպէս պարսկի սիրտն ու ուղեղը: Դէպի քաղաք ճուղերը կատարվում է չորս կողմից այն դարբաններով, որոնց աջ ու ձախ կողմերում գտնվում են կողրածեւ խաբիսու շինութիւններ, որոնք ծառայել են վաղեմի ժամանակներում իբրեւ զինամուկ եւ մթերանոց:

Դիլիմանը արտաբնական նման է մի մեծ գիւղի եւ, բառի բուն իմաստով՝ աւերակի կնիք է կրում: Ներսից էլ նրա պատկերը շատ չէ տարբերվում արտաքինից. —բացի մի քանի բարձր դարբաններից, որոնք շինված են գունաւոր աղւնակներով, բոլոր շինութիւնները բացառապէս կաւից են, ցածր դիւղով եւ մեծ մասամբ մի յարկանի: Փողոցները խիստ նեղ են, որոնք մոլոր եւ ամեն տեսակ աղբերով ու կենդանիների լէշերով լցված. գաղափարութիւնը չորս կողմից բուրումն է: Պատերի տակ թափված անթելի աղբախնդր իրանց գոնատ եւ քաղցրից նուազած ողորմելի հայեացքով մարդու սիրտ են չարժու: Նրանցից շատերը ոյժ չունեն անգամ ձայն հանելու՝ խնդրելու. ձեռքերը մեկ-նաժ լուռ նստած են, որպէս ուրուականներ:

Ներքի գծագրութիւնը Բայց ահա ինչն է ամենից շատ զարմանալի: Գանգատովոր միայն աշխարհականը չէ. գանգատովում են նոյն իսկ իրանք, հոգեւորականներ, նոյն իսկ անպիսիները, որոնք ամենակարող են հանդիսանում ներկայ խոջայի գրութեան մէջ: «Արեւելքի» քոչարկված գանգատներից անհամեմատ խիստ յօգուածներ կարելի է կարգաւ էջմիածնի լաւկան աստուածարանների օրգանում: Ինչն պիտի դուրս գայ այդ բոլորից: Գուշակելու համար հարկաւոր չէ մարգարէ լինել. միջնորդ աշխարհականները Գանգատի ափերից մինչեւ հիւսիսային Ամերիկա երազում են տեսնել ժամանակակից ողով կրթված, պատրաստված հոգեւորականներ, մեր «թափարեախնի» աստուածարանները բոլոր ամենայն եռանդով վերադառնում է միջին դարերին, վանականութեան հին պաշտամունքներն է կենդանացնում եւ ամենամեծ ախորժակով հաշտւել տեղերի է պատրաստում իր համար: Ոչինչ զարմանալու առիթ չը կայ, եթէ այդ տեսակ «նովիւներին» հօտերը օր օրի վրա դրում են, որ ձրիակներին մի խումբ են պահպանում. մանաւանդ զարմանալի չէ, որ իսթոլիկ կամ բողոքական միաբնակները նոյն եղանակով է որոնում այդ ձրիակներին հօտը, ինչպէս բուշմէնի, գուլուսին կամ կարմրամորթ հնդկացուն: Մեր հոգեւոր հայրերը վաղուց են թելել այդ տեսակ «անախորժութիւնների» վրա: Չաղ-չաղ կատուներ՝ միմեակ կոտորելու համար, իսկ աւետեհեւ թող աշխարհը քանդուի:

ՈՐՆ Է ԻՍԿԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ

«Բագուն իրէպները գերեզման է», «Բագուն լաւացած անարդարականութիւն է», «Բագուն հանդամանքները ապանել են», «Բագուն ոտ դնող ինտելիգենտը կորցնում է գլուխը, խըրվում է անարդարականութեան ցեղին մէջ, այլ լաւեղում է»... եւ այլն եւ այլն:

Այսպիսի եւ օրանց նման բացականչութիւններ մասնով մէջ շատ են տեղի ունեցել եւ դարձեալ շարունակվում են տեղի ունենալ, սակայն իրողութեան ընթացքը ոչ միայն չէ չեղվում իր ուղղութիւնից, այլ, ընդհակառակն, աւելի եւ աւելի զօրեղանում եւ սուր կերպարանք է ստանում: Տարէց տարի աւելի եւ աւելի բազմանում են դէպի Բագու զիմուղները, աւելի մեծ պահանջ է դառնում գաւառներից դէպի այդ արդիւնաբերական կենտրոնացող տեղափոխվել: Ինչու այդ այդպէս է: Ինչու Կովկասի նոյն իսկ մոտաւոր կենտրոնը՝ Թիֆլիսը ստիպված պէտք է լինի գլուխ խոնարհեց:

Քաղաքի կենտրոնում գտնվում է երկարածեւ քառանկիւ հրապարակ, կատարեալ աղբահոց: Հրապարակի շուրջը ձգվում են երկու շարք խանութների ծածկած շարտաններ: Բացի շարքի եւ կիրակի օրերից միւս օրերում կը տեսնէք խանութպաններին ձեռքերը ծալած լուռ նստած՝ որպէս մուսլմաններ: Կիրակի օրերում քաղաքը արտաքց կարգի կենդանութիւն է ստանում:

Այդ օրը բազարի օր է.—ամբողջ գաւառից ամենոց ծախողների խումբ բազմութիւն թափվում է քաղաք: Մինչեւ անգամ Սօմայի գաւառից եւ Թիւրքիայի սահմանակից գիւղերից պալիս են խումբ-խումբ քրդեր, վաճառելու իրանց հովուական արդիւնաբերութիւնը եւ թալանած անասունները: Անտանելի է այդ օրերում քաղաքի միջով անցուղարձ անելը. միջինների նման շարժվում է երկու սեռի բազմաբնակ, եւ բազմապարսկ ամբողջ: Չարտունակութեւ եւ հրապարակի վրա լցված, պղզիլ են գաւառական մթերալուծանքները եւ իրանց ապրանքը գովաբանում են:—Մի տեղ մասկաւաւոր մորթիլ է իր տաւարը եւ շուրջը տարածած կենդանու աղբը ու արիւնի մէջ՝ միս է վաճառում. մի այլ տեղ «հառանջ, հառանջ» գոռով մէկը հին չորեր է ածուրդով ծախում: Այստեղ թաղանթներով տանը թխած խմոր հաց է կենսական մթերքներ է վաճառվում ամենաէական գնով, այնտեղ շարքով նստած թուրք եւ ասորի կանաչ համարձակ առաջարկում են անցնողին բրդեղէն եւ բամբակեղէն դանդաղ գործվածքներ: Անհամար դէրվիշների գոռուողը ակամօ է խաչանում.—նրանք երեքով անցնում են խանութների առջեւից եւ «նաւալը» դնելով խանութպանի ձեռքի վրա—«դար-հա-դար» կրկնում մի քանի անգամ, մինչեւ որ 1—2 փուլ ստանում են եւ անցնում: Առեւտրականի մի ձեռքը չափում կամ կշռում է, միւս ձեռքը փուլ բաժանում դէրվիշներին եւ աղբախնդրին: Բազմաթիւ շարժի հրէաներ խանութների դուռն առաջ բացել են իրանց կապոցը եւ շողքերով լեզուով խաբում են բա-

նել միլիոնների հայրենիքի առաջ եւ ուղարկել իր ինտելիգենցիայի մեծ մասը ժամանակակից Սօքոմը: Բագուն Միթէ «չաղ տոնիկները» եւ «հարստանալու զիւրութիւններն են հրապարում», ինչպէս տրամադիր են կարծելու շատերը: Բոլորովին ոչ: Եթէ այդ լինէր պատճառը, այն ժամանակ տեղս գտնված բոլոր ինտելիգենտները պէտք է «չաղ-չաղ» ոտիկներ ունենային եւ արդէն հարստացած լինէին, սակայն իրականութիւնը բոլորովին այլ պատկեր է ներկայացնում, «Չաղ տոնիկները» եւ «հարստանալու զիւրութիւնները» երեւոյթ չեն անկեքին եւ բոլորովին ընդհանուր մետոլթ չեն ներկայացնում. այդ իր տեսակի «բարեբեքները» մատչելի են բացառապէս որոշ անհատների համար, որոնք ի ընդ ներշնչված են յայտնի յատկութիւններով... Այդ տեսակ անհատներ ամեն տեղ կան, որոնք լինեն թէ կառավարիչ, թէ ուսուցիչ եւ թէ նոյն իսկ խմբագիր, ընդունակ են եւ կարող գանաղան ճարպիկութիւններով «զիւրութիւններ ստեղծել» եւ հարստութիւնների աէր դառնալ:

Սակայն այդ չէ խնդիրը: Ուշադրութեան արժանի խնդիրն այն է, որ տեղիս հանգանակները—իւրաքանչիւր—կործանիչ են բարոյական տեսակէտից: Այստեղ, բառիս բուն նշանակութեամբ, տիրապետում է կապիտալը. ամեն ինչ պտտում է այդ կապիտալի շուրջը եւ նրան է խոնարհվում: Տարեցտարի ակներեւ է դառնում նրա զգալի յաղթանակը եւ ուժգին տիրապետութիւնը ընդդէմ անթիւն, անհամար հարստութիւնների, աշխատանքի մեքենայացած ներկայացուցիչների... Սա պատմական «երկաթե» մի օրէնք է, որ յատուկ է ամեն մի ժամանակամիջոցի, երբ հնարաւորութիւն է ըստ տեղիմուտ անհատի աշխատանքի եւ վարձատրութեան անհաւասարութեան. երբ մէկն աշխատում, արդիւնաբերում է եւ դարձեալ քաղցած է լինում, դարձեալ ուրիշի ձեռքին է նստում եւ նրա քմահաճոցից կախված մնում, իսկ միւսը ինչ-ինչ պատճառներով հանդիստ է առնում, դուրսանում եւ ուրիշի արիւն-քրքրտինքի արդիւնքը վայելում—կապիտալիստ դառնում, երբ հասարակութեան ապագին մի-ծառանութիւնը մասնավոր է քաղցի ու թրջուտութեան, իսկ աննշան փոքրամասնութիւնը այդ միծառանութեան թշուառութեան գնով տիրապետութիւն է վաստակում... Այն, անիրաւացի է, անարդար է, սոսկալի է, սակայն իրողութիւն է, ակներեւ, պայծառ իրողութիւն, որ նշմարելի է այստեղ ամեն մի քայլում: Եւ ահա այս սոսկալի իրողութեան դատապարտված է ականատես լինելու: Բագու:

Գաւառէ իրական սեռի գնորդներին Հայ կիրք, որ ընտանեկան յարկի տակ ամօթխածութեամբ ծածկվում է հիւրից, այստեղ երեսը բաց, համարձակ առեւտուր է անում հրէայի եւ թուրքի հետ: Մանր տղաք մի մի տոպրակ սեւ փող գրկած՝ վաղվում են ալ ու ձախ եւ սպիտակ փող փառացնում, կամ, ճիշդ սասձ՝ արծաթի փող՝ դիւհազարին (40 կոպէկանոց) գնում, մի քանի փուլ աւել վճարելով: Պարսկաստանում ընդհանրապէս գործ են անվում պղնձ եւ արծաթ դրամներ: Թէեւ կայ ոսկեայ 5—10 բուրլիանոց, սակայն քիչ գործածական է: Պղնձ դրամներն են.—փուլ, որ նման է ուսուական 1 կոպէկանոցին, գործ է անվում որպէս 1/3 փուլ, եւ 2 փուլանոց 3 փուլը: 1 շահի (կոպէկ), 4 շահին=1 արասի, 5 արասին=1 դան (20 կոպ.)։ Արծաթ դրամներ են՝ դան (20 կոպ.), որ շատ քիչ է գտնվում եւ դիւհազարի—երկու դանոց: 5 դիւհազարին=1 թուանի (2 բուր.), փողը համարում են թուանիներով: Թուական թղթադրամը շատ յարգի է: Երեսն ուրլին 10—12 կոպէկ աւել արժէ: Այժմ 1 բուրլին գնում են 5 դ. + 7 շահի:

Հետաքրքրական է տեսնել Դիլիմանի հրապարակում, տախտակի արկներին վրա նստած մօլաներին, որոնք գլուխները թեքած, ձեռքն վրա չարունակ ջրղըղզացնում են. եւ ինչ են գրում.—մուրհաբներ, խնդիրներ... Դրանք կառավարութիւնից օրինական ճանաչված մարդիկ են, չարթաթի օրէնքին քաջ տեղեակ. մեր նօտարների նման, դրանք են գրում բոլոր մուրհաբները, պայմանագրերը, կալուածագրերը... մի խօսքով ամեն տեսակ գրաւոր ակտ դրանք են գրում եւ հաստատում կնքով եւ ստորագրութեամբ: Դրանց գրածը կառավարչական գիւնատանքում օրինական ոյժ ունի: Այդ մօլա-նօտարների գրասենեակը ամառը հրապարակի վրա դրած տախտակի արկին է, ձեռքը արձարանների սպռում:

Սալմաստի բարձր կառավարչական մարմիններից Դիլիմանում նստում են.—արքիարատը,

զիմող ինտելիգենտը, եւ ոչ միայն ականատես լինելու, վրայ հանդիսանալու, այլ եւ այս կամ այն կերպով մասնակից լինելու, թէկուզ ակամայ, սակայն ի պաշտօնէ աշակցելու, կապիտալիստի շահերը պաշտպանելու, ի վնաս մեծամասնութեան շահերի:

Ուրիշ կերպ էլ չէ կարող լինել: Պէտք է կապիտալի շահերը պաշտպանէ, նրան ծառայէ, որ ոտնիկ ստանայ, ապրելու միջոց ձեռք բերէ, այլապէս ով նրան պաշտօն կը տայ. այն ինչ, եթէ ինտելիգենտը Բագու է գալիս, գալիս է յատուկ պաշտօն ձեռք բերելու, ծառայութիւն մտնելու համար:

Հասկանալի, որ այդպիսի պարագաների մէջ գրված պաշտօնը հաճելի չը պէտք է լինի: Եւ չէ էլ լինում ի սկիական ի տեղի գէնատան անհաւասարութիւնն աւելով: Ուղում եմ ասել, որ դիւղում ունենալը, բարձրագոյն ուսում ձեռք բերելը եւ արտասահմանեան դոկտորութեան տիտղոս կրելը գրաւական չեն կարող լինել անպայման ինտելիգենտութեան, մի հանգամանք, որ յաճախ աշխարհը ենք անում եւ վայրանում, երբ ինչ-ժէներ-տէխնօլոգը մեղադրվում է նաթի գողութեան մէջ, երբ փաստաբանն իր չափի համար արդարեւ մեղաւոր է դուրս բերում, երբ ուսուցիչը չարչիւթիւն է անում եւ այլն: Այսպիսիների համար խտրութիւն չը կայ միջոցների մէջ. ինչ ուղում է թող լինի, միայն թէ փող դուրս գայ միջոց: Այդ սկզբունքը առաջնորդ ընտրելով՝ շատ դիւղումաւոր փիչանքները չեն խորշում նոյն իսկ արատաւոր, տեղի եւ այլնազակ հարսնացուներից, որոնք հարուստ օժիտի հետ ունեն կապած իրանց բաղդը:

Սակայն թողնենք այդպիսիներին: Մեր խօսքը «իսկական ինտելիգենտներ» մասին է, որոնց գործը համապատասխանում է խօսքին, որոնք իրանց կոյման համաձայն գիտեն պարտաճանաչ եւ օգտաւէտ լինել: Այդպիսիների համար է իսկական տանջանքը: Դրանք պաշտօն ստանալով, տանում են ստանձնած գործը. բայց ինչ գործ, մի ակամայ գործ, որ զուգընթացում է հազար ու մի վրաւորանքների, գրկանքների եւ հարստահարութիւնների հետ: Այդ գրութիւնը տանում է նրան. նա սովոր չէ. նա դալբանում, վշտանում, վրդովվում է, բայց վերջ ի վերջոյ, ժամանակի ընթացքում, հաշտվում է իր անմխիթար վիճակի հետ, որովհետեւ պաշտօնավարութիւնը, ծառայութիւնը ալ ու ձախ այդպէս է, նա այդ տեսնում, համոզվում է:

որ քրիստոնեաների ընդհանուր կառավարչին եւ պարսիկների հաջիմը: Սարփարատի ամբողջ պաշտօնավարութիւնը կայանում է մի-միայն ժողովրդի գրգռող դատարկելու մէջ: Այդ բանի համար ամեն տեսակ չը լաված պատճառներ անպակաս են, որոնց մեծ մասը ինքն է հնարում իր ֆէրրաների ձեռքով: Իր պաշտօնավարութիւնը վերցրած լինելով 1500 թուական կապալով, յունվարից մինչեւ ապրիլ իր ոտնիկից, որ ժողովուրդն է տալիս, աւելի քան 4500 թուական տուգանք է ստացել, ինչին ուշադրութեան բոլորովին անարժան պատճառներով: 100—200 թուական տուգանք խեղճ գիւղացիներից անխուսափելի է, մի կողմը թողած ձեռք եւ զինանք:

Մօլա-նօտարներից պակաս հետաքրքրական չէ եւ պօստատուներ: Իմ քաղաքը չըլադայիլու օրը, կիրակի էր. լսեցի որ Ռուսաստանի պօստը ստացվել է, գնացի նամակ եւ լրագիր հարցնելու: Մեծ զարմանքով տեսայ, որ սովորական փոքր խանութիները մէկի մէջ թաղիքի վրա նստել էին երկու մաշաղիներ. մի կողմում հեշտառեն էր եկվում, միւս կողմում դրած նարթիկն են կուլացնում. հիւրեր էլ ունեն, որոնք թէյ են մատակարարում: Խանութի զբաւանք, գետնի վրա, թափված է ծրարների եւ փաթեթների մի կոյտ, շուրջը պղզած մարդիկ քրքրում են եւ իրանց հասցէներով ծրարներ որոնում: Նրանց հեռանալուց յետոյ, գետնին միացածներն էլ ցրվիչը գրգռան է մանում, որ բազարի օրերում որոնում է տէրերին եւ 1—2 արասով վաճառում... ով համարձակվի չը տալ արասին, նրա նամակն էլ կը փռէ ցրվիչը գրգռանում:

Պարսկաստանի կեանքը դիտողի վրա այն տպաւորութիւնն է թողնում, որ ակամայ գալիս է այս եզրակացութեան.—եթէ 19x19 դար էլ անցնի, ծոյլ եւ թմրած պարսիկը առաջադիմութեան ճանապարհի վրա մի քայլ անգամ չի անի:

Ա. Միլի-Բարախանեան

Այլ եւս ուրիշ եղբ չէ մնում—կամ թողնել հետնալ եւ կամ, թէկուզ ակամայ, հաշտութիւն հետ Անկախութեան շատ շատերը իր հետնալին, եթէ միայն հնարաւոր լինէր, բայց ոչ է այդ հնարաւորութիւնը։ Եթէ հնարաւոր լինէր, ոչ ոք հօ իր ազատութիւնը չէր վաճառի։ Ահա հէնց այս հանգամանքն է, որ կործանիչ ներգործութիւն է ունենում ինտելիգենտի բարոյականի վրա. նա ընտելանում է... նա այլ եւս չէ արանջում, տեղի ունեցող արդիւնքները նրան այլ եւս չեն վրդովեցնում. նա կորցնում է բողոքելու ընդունակութիւնը եւ անտարբեր է դառնում...

Ինչ է ձեռք բերում նա՞ կորցնելով այստեղ մարդկային այդ թանկագին արժանաւորութիւնները։ Հարատուութիւն, գիրք, ապագայ։ Ոչ մէկը եւ ոչ միւսը։ Տասնեակ տարիներ ծառայելով դարձեալ նոյն ծառայողը, դարձեալ ամսական առժեկը ամսադրոյին մարքադարձողը եւ այլն Փաստերը այդ են վկայում։ Ոչ ոք, համարեալ, այդ ստոր վաստակով չէ հարստացել եւ չէ հարստանում։ Կան 10—15 տարվայ ծառայողներ, որոնք բացի պարտքերից, ուրիշ ոչինչ չունեն։ Կան եւ ընդհակառակը 3—4 տարվայ նորակներ, որոնք արդէն աչքի ընկնող կարողութիւն են ձեռք բերել։ Պատճառը ինքն ինքն է. պարզ է եւ հասկանալի։ Սակայն այս երեւոյթը միթէ իրաւունք է տալիս անիմալիս Բագուի վիճակը։ Միթէ արդիւնաբերական ուրիշ կենտրոններ աւելի նպատաւոր հանգամանքներ են ներկայացնում. միթէ պետի խորիւր այդ տեսակ վայրերից։ Հազա ուր զինուոր, ինչ անել, ինչով պարագլուխ։ Ինչու տալիս-տարի լցվում է Բագուն գաւառացիներով. ինչու այսօր ողջ Անդրկովկասը համարեալ զանգու՛ Բագու է թշուալում։ միթէ քեֆի համար, միթէ չաղ-չաղ ուտիկներ վալիլու համար։ Եւ միթէ կարող է այդ հոսանքը տեղի չունենալ, դարձեալ, քանի որ անհրաժեշտ կարիքը մղում, անտեսական ճգնաժամն է թեկադրում։ Ինչ անեն, որ Բագու չը դառն Ուր գնան, որտեղ պաշտոն որոնեն անպաշտօն ու տալիսները։ Ինչ անեն նորաւար ինժեներ-տեխնիկները, քիմիկոսները եւ մեքենայագործները, եթէ Բագու չը գնան Ղարաբաղի միայն, Իգգերում կամ Քարվաշարայում կարող են նրանք ապրել, պետանի լինել։ Անկախութեան ոչ։

Հետեւապէս այդ հոսանքը պէտք է համարել բնական՝ բոլորս հարկադրող շարժանքներից։ Ներկայ զարգացմանը, երբ տնտեսական ճգնաժամը ամեն մի քայլում չօգտակել է դառնում, երբ ժողովրդի կեցութիւնը ամեն կերպ վատնալ է մատնված, Բագուի պէս արդիւնաբերական կենտրոնները նոյն իսկ վերկարար անդաւրաններ են հանդիսանում։ Եւ պէտք է հանդիսանան։ Որքան շատ, այնքան լաւ։ Որքան շատ եւ ընդարձակ ծաւալով արդիւնաբերվի կովկասի երկրի տակ թաղնված հարստութիւնը, այնքան աւելի լաւ։ որքան շատ ինտելիգենտներ մասնակցեն այդ արդիւնաբերական գործում, որքան այդպիսի կենտրոններ գրաւեն իրանց շուրջը շատ աշխատատեղներ, այնքան աւելի նպատակայարմար, սակայն ուշադրութեան արժանի մի լուրջ պայմանով, այն է՝ որ ինտելիգենտների, աշխատատեղների, կապիտալիստների եւ անմիջական բանւորների մասնակցութիւնը տեղի չունենայ նոյն չափով, նոյն իրաւունքի եւ պարտականութեան ծաւալով, ինչպէս մինչեւ այժմ է տեղի ունեցել։ Պէտք է ամեն ջանք գործ դնել, որպէս զի արդիւնաբերութեան չափաւորութիւնը չը ծանրանայ միայն մի կողմի վրա, աւելի եւ աւելի չը դառնէ կապիտալիստների աշխատատեղներից, չարժանէ աշխատանքի եւ կապիտալի դէպի միմեանց ունեցած թշնամական կապը, այլ ընդհակառակը մօտենցէ, հաշտեցնէ դրանց եւ ըստ կարելոյն ձգտէ դէպի այն մեծ գաղափարը, որ աշխատատեղները, արդիւնաբերութեան գործի մասնակիցները իրանք լինեն եւ գործի տէրը։ Իմ կարծիքով, ահա ուշադրութեան արժանի խնդիրը։

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր Պետերբուրգից Թիֆլիս են գալու դեռ ներաւաղիւտանա Արսենով եւ գնդապետ Բենզարտ. այստեղից նրանք շարունակելու են իրանց ճանապարհը դէպի պարսկական սահմանագիծը, ուր նրանք կը դիմաւորեն պարսից Շահին։

Մեզ հաղորդում են, որ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ծրագրած համապատասխան ցուցահանգիստը չէ անցել։

Վրում նիւթական միջոցների պակասութեան պատճառով Ինչպէս յայտնի է, այդ ցուցահանգիստը պէտք է բացվէր եւ ինչ 1900 թ. ապրիլին։

«Кавказ» լրագրում կարդում ենք. «Վրաց եւ հայոց գրականութեան հետ որքան կարելի է շատ ընթերցողների ծանօթացնելու համար»։ Ա. Հերցենշտէյն ձեռնարկում է հրատարակել Թիֆլիսում «Կովկասեան գրագրան», որի մէջ կը մտնեն հայ եւ վրացի գրողների ամենանշանաւոր վիպական եւ բանաստեղծական արտագրութիւնների ռուսերէն թարգմանութիւնները։

Թիֆլիսի քաղաքային դռման իր վերջին նիւտում որոշեց լանալ դարձեալ հինգ տեղ հոգեկան հիւանդների համար եւ ներկայացնել դռմային նախագիծ՝ հոգեկան հիւանդների ապաստարանի ընդարձակման մասին։

Թիֆլիս քաղաքի ջրաբաշխութեան հարցը սկսում է զբաղեցնել քաղաքի ազգաբնակչութեանը, որովհետեւ մօտենում է ամառը, երբ յաճախ քաղաքում զգացվում է ջրի պակասութիւն։ Անցեալ տարվանից Աւաղայում, որտեղ գտնվում է ջրամբարը, աւելացրած է նոր շտապար մեքենայ, որ պէտք է միւս գործիչների հետ միասին նպաստէ ջրի քանակութիւնը պահպանելու մի եւ նոյն աստիճանի վրա։

Հինգաբլթի, մայիսի 4-ին, Թիֆլիսի «Կրուտի» դահլիճում, պրօֆէսոր Ն. Ա. Կոտեհաբովի կը կարդայ մի հրապարակական դասախօսութիւն՝ «Գեղեցկութեան պաշտամունքը այժմեան գեղարուեստի մէջ»։ Դասախօսութեան ծրագիրը բաւականաչափ հետաքրքրական է։ Պրօֆէսորը խօսելու է ի միջի այլոց, նաեւ սիմբոլիզմի, միստիքականութեան եւ գեղարուեստական երեւոյթների մասին նորագոյն գրականութեան մէջ։

Կոյրերին խնամող ընկերութիւնը խնդրում է մեզ լայնել, որ նա ստացել է ակցիդի վարչութեան մէջ դրված լուսատուփից 160 ռուբլի 46 կօպէկ, որի համար նա յայտնում է իր շնորհակալութիւնը։

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, թէ հիւսիսային Կովկասում զեմստովնի հիւսիսարեւելեան մոյնելու ծրագիրը կը քննվի Պետերբուրգում առաջիկայ յունիս ամսի սկզբին։

Սենատը բացատրեց, թէ գիւղական դասակարգին պատկանող անձինք, որոնք մտնում են զանազան ուսումնարաններ, ստանում են արձակման վկայական եւ զրկվում են իրանց հողաբաժիններից միայն այն դէպքում, երբ, ուսման ընթացքին աւարտելուց յետոյ, ցանկանան նուրիքի իրանց պետական ծառայութեան։ Իսկ նրանք, որոնք ուսման մէջ պահանջված առաջադիմութիւնը չեն ցոյց տալ, կամ դուրս կը գնան ուսումնարաններից ուսման ընթացքին աւարտելուց առաջ, եւ չեն ցանկանալ մտնել պետական ծառայութեան մէջ թողնվում են նախկին կոչման մէջ, ուստի եւ օգտվում են այն բոլոր իրաւունքներից, որ ունի գիւղական համայնքի անդամը։

ՎԼԱԴԻԿԱՎԻԿԱՍՉԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 30-ին այստեղից հայոց եկեղեցում հոգեհանգիստ կատարեցին տաղանդաւոր նկարիչ Յովհաննէս Այվազովսկու մահվան տոնի յիշատակով։

ՇԻՐԱԿԻՑ մեզ գրում են. «Կարսի նոր հանգապետ Սամօյով ապրիլի 26-ին այցելեց Շիրակի մի քանի գիւղերը, մանաւանդ նոր զբաղված ուսանելի գիւղերը. նախազգուշակալի ղեկավարները բոլորն էլ ուրախ տրամադրութեամբ վերադարձան, որովհետեւ բոլորի հետ ուրախութեամբ խօսում էր եւ խում նրանց ցաւերը, խնդրագրերը անձամբ ընդունում էր, եւ խոստանում էր իր աշակցութիւնը։ Նահանգապետի այդ մարդասիրական բարի վարմունքը միշտ անմոռանալի կը մնայ ժողովրդի սրտում»։

ԱՂԴԱՇԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 27-ին գիւղեր երեք աւազակներ կողոպտեցին մի ժամագործի խնամութեամբ, ուր գտնվում էր մօտաւորապէս 10,000 ռուբլու ապրանք. խնամութեան լինում է 110 ռուբլի հին փող. այդ էլ կողոպտում են»։

ԱՐԳԻՆԱՅԻՑ մեզ գրում են. «Շիրակեցիները արդէն վերջացրել են վարուցանքը. ըստ երեւոյթների, հաջաբոյսը շատ լաւ է եւ խոստումնաւոր»։

տանում է առատութիւն. անձրեւները եւս պակաս չեն, պարբերաբար գալիս են եւ նպաստում ցանքերին։ Շիրակի ամբողջ դաշտերը եւ մարգագետինները ծածկվել են կանաչներով. չիրակեցիները այժմ պատրաստութիւններ են տեսնում եայլով դուրս գալու, որ կարողանան իրանց անասունները լաւ կերակրել։ Խեղճ չինականները անցեալ ձմեռը մեծ նեղութիւններ եւ վնաս կրեցին անասունների կերակրի, խոտի եւ յարդի նման չը տեսնված թանգուն թիւնից, այնպէս որ չատերը նոյն իսկ յարդ չունենալու պատճառով զրկվեցին իրանց անասուններից»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Կօպենհագենի «Politiken» լրագրում տրււած պատկերացի կապիտան Ալլիւմի նամակը, որն իր կառավարութեան կողմից ուղարկված էր Հարաւային Աֆրիկա՝ բօէրների պատերազմական գործողութիւններին հետեւելու համար։ Բօէրները, գրում է Ալլիւմ, եւտանդով թնդանօթ, ուսմբ եւ վատօք են պատրաստում։ Պրէտորիայի շուրջը չորս ամենազօրեղ մարտիկներ կան, բայց չը նայելով դրան, եւ համոզված են, որ բօէրները չեն կարողաւայ երկար պաշտպանել իրանց մայրաքաղաքը։ Չորս առանձնացած մարտիկներ, առանց ուրիշ օժանդակ ամրութիւնների, անբաւարար են Պրէտորիան անտիկ դարձնելու համար։ Բացի դրանից, այն թնդանօթները, որոնցով պաշտպանվում են մարտիկները, դաշտային սովորական թնդանօթներ են։ Երէկ եւ ընդունելութիւն ունեցալ Կրիւզերի մօտ, որ նոր էր վերադարձել Օրանժեան հանրապետութիւնից։ Ինչ այնպէս երեւալ, թէ նա սաստիկ ծերացել եւ լուսանաւորվել է։ Նրա աչքերը ցաւում էին եւ նա քիչ էր խօսում ինչ հետ, բայց մի րօպէ ոգեւորվեց եւ բացականչեց. «Ի՞նչ կարող ենք անել մենք, թշուառ բօէրներ։ Անդլիացիները մի կէտում 100 հազար զօրք ունեն, 40 հազար երկրորդ կէտում եւ 30 հազար երրորդում են դեռ այդ բաւական չէ, մեր դէմ ուղարկում են 30 հազար կաֆրներ։ Նախագահն ուղիղ այդ ժամանակ տեղեկութիւն էր ստացել կաֆրների արշաւանքի մասին դէպի Ինքզէպորտի Ընդհանրապէս եւ այն տպաւորութիւնն ստացալ, թէ մի կողմից Կրիւզեր ամեն ինչ կորած է համարում, բայց պատեհից, իսկ միւս կողմից՝ նա մտադիր չէ չլուսով անձնատուր լինելու»։

«Daily Mail»-ի թղթակիցը հաղորդում է Լօրէնցօ-Մարիզէից, թէ Տրանսվալի պետական արեւին ուղարկված է Պրէտորիայից Լիդէնբուրգ Թօլարատի եւ ուրիշ չինութիւններին տակ ականներ են փորված՝ կարեւոր դէպքում նրանց պաշտպանելու համար։ Զօրքի մէջ արձակուրդի թիւը միւլթիւն էր դարձանքը։ Եւ այն բօէրները, որոնք ինքնակամ հեռանում են զօրանալիքից, ենթարկվում են պատժի։ Պետական հիմնարկութիւնների գիւսականութեամբ կանայք են աշխատում, որովհետեւ բոլոր տղամարդիկ գնացել են պատերազմի դաշտը։

Եւրօպական լրագիրները լի են այն անկարգութիւնների մանրամասնութիւններով, որոնք պատահեցին եւ դեռ շարունակվում են Բօլդարիւթում։ Զը նայելով բօլդարական կառավարութեան հերքմանը, անկարգութիւնները լուրջ բնաւորութիւն ունենալ Այդ մասին «Berliner Tageblatt»-ի թղթակիցը Սօֆիայից հետեւալն է հաղորդում. «Գիւղացիների անկարգութիւնները շարունակվում են։ Ապստամբութիւնը ճնշելու համար ուղարկված զօրքերը մեծ վնասներ կրեցին։ Շատ օֆիցերներ եւ զինւորներ վիրաւորված են։ Պաշարման գրութիւնը տարածված է ուրիշ հինգ յրջանների վրա եւս։ Բուչուկ քաղաքը չը շարունակված է զօրքերի չը թաղվով։ Ոչ ոք չեն թողնում ոչ քաղաք մտնել, ոչ դուրս գալ այնտեղից։ Բուչուկի պրէֆէկտը հրամայեց զընդապետ Գէօրգիլիին հրաջան արձակել ժողովրդի վրա, բայց Գէօրգիլի եւ միւս օֆիցերները յայտնեցին, թէ այդպիսի բան չեն անի, մինչեւ հրաման չը ստանան Սօֆիայից։ Տրեստենիցի մօտ հաւաքվեցին 26,000 զինւորացիներ հրաջաններով եւ ատրանակներով։ Յաւապարհին քանդեցին երկաթուղու գծի մի մասը, կամուրջը եւ հեռագրական կապարանը։ Զօրեքաւթի օրը այդ զինաւորված ամբոխը կանօնաւոր կոլու ունեցաւ զօրքի հետ։ Մասնաւոր տեղեկութիւններին նայելով վիրաւորված 30 եւ վիրաւորված են 200 հոգի։ Ամբողջ Բօլդարիւթում սարսափ է տիրում»։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

1 մայիսի

ԿՐՕՆՇՏԱՏԳԻ։ Ասում են, թէ Կրիւզեր մտադրութիւն ունի գնալ Լէդէնբուրգ, հէնց որ Շտէյն վերադառնայ, որ գեներալ Բօտայի հետ միասին ուղևորվել է Կրօնստադտ։

ԼՕՐՆՇՕ-ՄԱՐԿԵԶԻ։ Պրետորիայի ազգային ժողովը գաղտնի նիստում որոշել է պարտաւորեցնել Տրանսվալի բոլոր ընտրիչներին, ինչպէս էլ որ պատկանելի լինեն նրանք, մասնակցելու հանրապետութեան պաշտպանութեանը։

ՊԻՏԵՐՄԱՐԻՑՈՒԳԻ։ Բուլլեր հաղորդում է, թէ նրան աջողվեց անցնել Բիգգարեան լեռների անցքով։ Այսօր սպասվում է Դուռլիի գրաւումը։

ԿՐՕՆՇՏԱՏԳԻ։ Շտէյն գնաց Գէլլերօն եւ այդ քաղաքը նոր մայրաքաղաք հռատարակեց։ Աւելի քան 400 բօէրներ վայր գրին զէնքերը կրօնշտադում եւ նրա չը շարակցեցին։ Լուրերին նայելով՝ տրանսվալցիները կենտրոնանում են Վալ դեալ մօտ։

ՊԱՐԻՉ։ Ընտրութիւնների ժամանակ հանրապետականները յաջողով հաղթանայան քաղաքների մեծամասնութեան մէջ Լիլլում, Լիօնում, Ալէն-Լաիէնում, Մօնպէլիէում, Տուրում, Պուատիէում, Նանտում, Բօլֆորում, Բուրժում եւ Բըզանսօնում։

2 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒԳԻ։ Թագաւոր Կայսրը, օգտաւար համարելով գիտութեան մէջ ուսուց ֆըլօրային վերաբերեալ պակասութեան լրացումն, բարեհաճեց Բարձրագոյն հրամայել յանձնել այդ աշխատանքը ակադեմիկոս Կօրֆինսկուն։ Նորին Մեծութիւնը հրամայեց նաեւ տալ Իր անձնական միջոցներից 24,000 ռուբլի, որպէս զի այդ գումարով հոգացվեն Սիբիրի ֆլօրային վերաբերեալ աշխատութիւնների մշակման եւ հրատարակութեան ծախսերը։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Բօէրները աստիկ ուժակոծում էին Մեֆիկինգը. թնդանօթային կրակով տեղացիների թաղը աւերված է։ Մի ուսմբ հրդէհ առաջացեց Դէլագոայի ծովախորշով կենսական միջոցներ անցկացնելու արդիւնք ամենից նից առաջ վատ ազդեցութիւն կունենայ անգլիացի գերիները վրա. առաջ միջոցներ կը տրվեն բուրգերներին, ապա չեզոք պետութիւնների հպատակներին եւ յետոյ միայն գերիներին։

ԲՈՒԴԱ-ՊԵՇՏ։ Ունգարական զեկեպայիայի բիւրօէտային յանձնաժողովում Գօլուխօվսկի նկարագրեց գործերի դրութիւնը։ Սօսելով Ֆրանց-Յովսէֆ կայսրի տեսակցութեան մասին Վիլհելմ II-ի հետ. մինիստրը նկատեց, թէ այդ տեսակցութիւնը մի նոր հաստատութիւն էր այն սկզբունքների, որոնց վրա հիմնված է միջին-եւրօպական խաղաղ-դաշնակցութեան աստիկ շէնքը։ Ետապետական դաշնակցութիւնը լրագրօրվում է Վենիայի եւ Պետերբուրգի կառավարութիւնների մէջ եղած թանաքային համաձայնութեամբ, նոյնպէս եւ գերազանց յարաբերութիւններով միւս պետութիւնների հետ։ Աւստո-Ունգարական կառավարութեան գլխաւոր հոգան է պահպանել այդ գրութիւնը ամբողջութեամբ։ Շօշալիելով հարաւ-աֆրիկական պատերազմին միջամտելու հարցը, Գօլուխօվսկի ստաց, թէ միջամտութիւնը բոլորովին անհնար է, որովհետեւ դրա համար պահանջվում է երկու պատերազմող կողմերի համաձայնութիւնը։

ՍՏՕՆԻԼՅԵՄՄ։ Երկրորդ բրիգադան յարձակում գործեց թշնամու ձախ թիւի վրա։ Դէնդօնայլը իր հեծանախով յարձակվեց կենտրոնի վրա, իսկ Բետունի հետեւակները անցան բօէրների աջ թիւի ետեւը։ Թշնամին նահանջեց։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողովը։ Չեմբերլէն հաղորդեց, թէ նախագիծ է կազմված գաղտնի խորհրդի անդամների թիւի մէջ մտցնել եւ միմի ներկայացուցիչ կանաքայի, Աւստրալիայի, Հարաւային Աֆրիկայի եւ Հնդկաստանի կողմից, տալով նրանց անդլիական պիւրի կոչումն ցմահ։

ԲՈՒԴԱ-ՊԵՇՏ։ Յանձնաժողովները եւ պատգամաւորութիւնները նոյնը թողնել պետական ծախքերին մասնակցելու չափը. Ունգարական պէտք է վճարէ 35,4%, իսկ Աւստրիան—64,6%։ Այդ համաձայնութիւնը ընդունված է աւստրիական եւ ունգարական պատգամաւորութիւնների ընդհանուր ժողովում։

Աւստրիական պատգամաւորութիւնը։ Չեմ Սլաւա յայտնեց, թէ չէլիեր ձախ տուին արտաքին գործերի մինիստրութեան բիւրօէտի դէմ՝ հաւատ չունենալով դէպի Գօլուխօվսկին եւ նրա քաղաքականութիւնը։ Չեմբերլէն չեն պահանջել, որ Աւստրիայի յարաբերութիւնները լարվեն Գիւրմանիայի հետ կամ Աւստրիան թշնամական գրեք ընէլ դէպի Գիւրմանիան, բայց միւս կողմից Ռուսաստանի հետ կապած համաձայնութիւնը նրանք համարում են խաղաղութիւնը պահպանելու գրաւական։ Նրանք կարծում են, որ վերջին օրերում

